

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոստ 5 մր. 8 ՄԷՆ.
Քառասուն, 10 ՄԷՆ.
Վեցսուն, Կ. Պոստ 6 ՄԷՆ.
Քառասուն, 5 ՄԷՆ.
Մանուցման տարբ. մեկ տեղամի հա-
մար 3 զուրուշ, երկու տեղամի հա-
մար 2 զուրուշ, առեկի տեղամի հա-
մարը գումար տարբերություն կը-
լայ :



ԼԵԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ 9 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օսմանեան երեսփոխանական ժո-
ղովոյ մէջ Կարնոյ հայազգի երեսփո-
խաններուն ըրած ատենախօսութիւն-
ները մեր երեքաթիւ աւուր թուով
հրատարակեցինք : Խնդրոյն կարեւ-
րութեան պատճառաւ՝ այս նիւթիս
վրայ քանի մը խորհրդածութիւն ալ
մեք ընել կու գնինք : Կարնոյ երես-
փոխանը ընդհանուր ազգին շնորհա-
կալեաց արժանի եղան, քանզի ամե-
նայն անկեղծութեամբ ճշմարտութիւ-
նըն յայտնեցին, և իրենց ձայնն ար-
ձագանք դրաւ Օսմանեան երեսփո-
խանական ժողովոյ մէջ, ուր մանա-
ւանդ յոյն անդամը ազգու կերպիւ
պաշտպանեցին Կարնոյ Հայ երեսփո-
խանաց կարծիքն, և իսլամ անդամը
ալ ամեն ձայնակցեցան : Պալլարեան
Համալսարանէն քանի մը հետա-
քըքրական և կարեւոր տեղեկութիւն-
ներ տուաւ : Քիւրդերուն նկատմամբ
Կարնի որ վայրենեցնումանք՝ ձերբա-
կալեալ և բանտարկեալ Քիւրդերէ
40000 ոսկի առնելով կ'արձակէին, և
ազատ կը թողնին՝ դարձեալ ժողո-
վուրդը տոկոսեօք կեղեքելու համար,
և երբ յիշեալ էֆէնտին անգամ մը
վայրի մը դիտողութիւն ըրեր է այս
խնդրոյն վրայ, և ըսեր է թէ երկու
վաշա զօրք բաւական է Քիւրդերը
զսպելու, պատասխան առեր է թէ
հիֆէնդ հիֆէնդ այսինքն կառավա-
րական գաղտնիք կայ այս խնդրոյն
մէջ : Ասիկա հռչակաւոր Ռէզոն Տ'է-
թան է որ Եւրոպիոյ մէջ այնչափ չա-
րիք արդարացնելու պատճառ բռնը-
ւած էր : Այս հիֆէնդ հիֆէնդ էր
որ Հէրսէքի ապստամբութեան և ներ-
կայ բոլոր չարեաց պատճառ եղաւ,
որոյ բոլոր պատասխանատուութիւնը
պէտք է այնպիսի կոյր մոլեռանդ և
չահաւեր պաշտօնատարաց վրայ ծան-
րանայ, որք իրենց առաջին պարտա-
կանութիւնն՝ այն է հասարակութեան
կենաց ընչից և պատուոյն ապահովու-
թիւնը չեն պաշտպաներ, կամ մանա-
ւանդ իրենց շահուց խաղաղիկ կընեն
Մինչև ցարդ շատ գանդատներ եղած
էին գաւառական հարստահարու-
թեանց, Քիւրդերու գործած անթիւ
եղեռանց վրայ, սակայն առաջին ան-
գամն է որ տէրութեան մեծ ժողովի
մ'առջև հրապարակաւ կը յուզուի այս
կարեւոր խնդրին, և դարման կը պա-
հանուի անոր : Յոյս կայ ուրեմն որ
գաւառական հարստահարութեանց
վերջը կը մերձենայ, և տէրութիւնն
ազգու միջոցներ ձեռք կառնու բար-
բարոս Քիւրդերն ու ամեն տեսակ կե-
ղեքիչները զսպելու ժամը կու գայ որ
Հայերն ալ երկրին կառավարութեան
մէջ իրենց արժանաւոր բաժինն առ-
նան, բայց ասոր հետ 'ի միասին պիտի

չէ մտնալ որ ամեն իրաւունք իրեն
փոխադարձ պարտականութիւնն ալ
ունեն : Պարտականութեան մասին գան-
ցառութիւն կամ ձեռնպահութիւն
ընելը՝ պատճառ կըլլայ իրաւունքն ալ
չպահանջելու, կամ մեղի և թող կեր-
պիւ գործադրելու : Վարչական դա-
րաւոր անգործութեան վարժուելով
Հայք՝ դժբաղդաբար կորուսած են
քանի մը յատկութիւններ, որք երկրի
մը քաղաքացեաց անհրաժեշտ են : Այս
կարգէն է արիւթեան առաքինու-
թիւնն, առանց որոյ ամեն իրաւունք
հզօրացումին քիչ կամ որս կերթան :
Ուստի ամենայն արիւթեամբ պէտք
է մեր պարտականութիւնները կա-
տարենք և իրաւունքն ալ պաշտպա-
նենք ու պահանջենք : Ասոր համար
մեք առաջարկած էինք երկրին պաշտ-
պանութեան մասնակցելու դադարիա-
րը, գոնէ կամաւոր կերպիւ : Երբ
այսպէս մեր հիմնական մէկ պարտա-
կանութիւնն իսլամաց հետ 'ի միասին
կատարելու ըլլանք, ամեն կերպիւ
իրաւունք կունենանք հաւասարու-
թիւնը կատարեալ ճշգրտութեամբ պա-
հանջելու և գործադրելու : քրիստոն-
եայք իսլամաց զինուորակցելով, հա-
ւասարութիւնը նոյն իսկ պատերազ-
մի դաշտին վրայ իւր նուիրագործու-
թիւնը կ'ստանայ, և այնուհետեւ թէ
կառավարութեան և թէ ոստիկանու-
թեան մէջ քրիստոնեայն ալ իւր բա-
ժինն ունենալով իւր իրաւանց իրօք
տէր կըլլայ :

Երկուշաբթի օրը վեհ. Սուլթանը
թօփհանէ երթալու առթիւ Տէմոս-
թէն էֆէնտին կաղմած Յոյն կամա-
ւորաց խումբն ալ աչքէ անցուցեր է,
ինչո՞ւ համար նաեւ Հայ կամաւորաց
խումբ մ'ալ վեհ. Սուլթանին ներ-
կայանալու պատիւ չունենար : Մեք
առանց որ և է մասնաւոր նպատակնե-
րու յորդոր կարգացեր էինք որ զի-
նուց փառաւոր ասպարէզն ինքնայո-
ժար մտնել ուզող Հայերէ խումբ մը
կաղմուի : Կարծենք այս գաղափարը
խոտելի չլինար ըլլալ, քանզի դարե-
րէ 'ի վեր զինուորութեան անվարժ
ժողովուրդ մ'ստով սկզբնաւորութիւն
մ'ըրած կըլլայ պատերազմական ար-
հեստին յարմարութիւնն ցուցնելու :
Այս եղանակաւ ո՛չ միայն իսլամաց
այլ և Եւրոպացեաց յարգանաց ար-
ժանի կըլլան Հայերն ալ, ինչպէս ե-
ղան Սերվիոյ պատերազմին ժամա-
նակ, որոյ փորձը գոհացուցիչ եղաւ
արդէն : Այս խնդրոյն վրայ աւելի ա-
նոր համար կը պնդենք, որ երբ երկ-
րին պաշտպանութենէն ետեւ կարգը
խաղաղական բարենորոգմանց գայ,
Հայերն ալ իրենց զինուորական ծա-
ռայութիւնը ցուցնելով պէտք է պա-
հանջեն և ընդունին որ տեղական
խառն ոստիկանութեան զօրք կաղ-
մուի, հեծեալ և հետեակ, հասա-
րակաց անգործութիւնը պահպանե-
լու համար, որով միայն կրնայ բնա-

րարձ ըլլալ հարստահարութիւնն ու
աւազակութիւնը :

Պատերազմի ասպարէզէն եկած
լուրերը սակաւ են : Օսմանեան զօրքը
Նիքսի պաշար մայուցեր է, ինչպէս
կը ծանուցանեն Հալապի և Պատիք-
թի հեռագրաւորները, բայց տակա-
ւին ասոր վերաբերեալ պաշտօնական
հեռագրաւորներ չհրատարակեցան :
Գարատաղի վրայ եղած արշաւանքն
յաջողութեամբ կը պսակուի, և կը
յուսացուի որ կայսերական զօրաց
շարժումները քիչ օրէն այս իշխանու-
թիւնը բոլորովին նուաճելու կարող
կը լինին : Մէհմետ Ալի փաշա դրեթէ
շարունակ Գարատաղինէն նոր
գիւրքեր կորզելով յառաջանալու վրայ
է : Միքայէլ Մեծ դըսին մէկ հե-
ռագրաւոր կը ծանուցանէ թէ մա-
յիս 28 ին Չափապէց իշխանին հրա-
մանաց ներքեւ հեծելազօր և թնդա-
նօթ զրկուեցաւ Օսմանեան հեծելա-
զօրաց վրայ, որք Պէնի Ահմետ գիւ-
ղը բանակած էին : Կէս դիշերուն
Ռուսը երեք կողմէ յարձակեցան
Մուսա փաշայի բանակեղան վրայ,
և սաստիկ պատերազմ մ'եղաւ Օս-
մանեան զօրքն յետո նահանջեցաւ :
Տէյլի-Թէյէկրաֆի թղթակիցն այս
պատերազմն իբրեւ սաստիկ ջարդ մը
կը ներկայացնէ, ուր Մուսա փաշա և
չորս հազարի չափ Չէքքէզ պաշտնուած
են եղեր, բայց այս լուրը չափազան-
ցութիւն կերելի : Դանուրի եղբրը,
Նիկոպօլէն կը գրեն թէ 48 Չէքքէզ
և 6 պաշը-պօղուդ գիւրդայն գետն
անցնելով Յիւսուֆա եկած խաղախ-
ներուն գումարտակին վրայ յարձա-
կեր և զանոնք 'ի փախուստ դարձու-
ցեր են : Ետոյ Յիւսուֆայի արօտնե-
րէն 18 ձի և 165 ի չափ արջառ առ-
նելով ետ դարձեր են : Ռուսը Դա-
նուրի ուղեւորական եղբրը շարու-
նակ կամրայնեն, թնդանօթներ կը
դնեն, և ինչ որ տեսնեն կը ռմա-
կոծեն : Լրագրաց խորհրդածութիւն-
ները կը հաստատեն թէ Ռուսաց զօ-
րութիւնը բաւական չէ Դանուրի Օս-
մանեան ամրութիւնները պաշարելու
և միանգամայն դաշտի վրայ պատե-
րազմող բանակ մը պահելու : Դա-
նուրն անցնելէ ետեւ ալ Ռուսը մեծ
գժուարութեանց պիտի հանդիպին :
զի բոլոր ամրութիւններն առնուլ ա-
հագին ճգանց և կորստանց կարօտ
է : Պէտք է շարունակ զօրք տեղան
Ռուսմանիա և Պուլաւիա, որպէս զի
պատերազմն մինչև նոյեմբեր կարե-
նայ վերջանալ : Իսկ եթէ այս ընելու
անկարող գտնուին, պատերազմին վախ-
ճանը գիւրդած է և բազմէ կախում
կունենայ : Այս պատճառաւ կարծող-
ներ կան թէ Ռուսիա Սիւրի կողմը
զինուորական շարժումներ կը փու-
թացնէ, որպէս զի կարելի ըլլայ իրեն
համար պատուաւոր հաշտութիւն մը
կնքել, և արդէն հաշտութեան զը-

բայցները կը յարատեւեն, բայց առանց
յաջողելու հաւանականութեան :

Սուէիչի ջրանցին խնդիրն Եւրո-
պական լրագրաց բաւական նիւթ կը
մատակարարէ խորհրդածութեանց :
Սիւրի ջրանցին նկատմամբ Պ. Լէսէֆի
ըրած առաջարկութիւնն և անոր վե-
րաբերեալ գրութիւնները խորհրդա-
րանին ներկայացուց : Պ. Տը Լէսէֆի
կը խնդրէ որ ջրանցը չեղք վիճակի
մէջ գրուի, և իւր այս առաջարկու-
թիւնը Լորտ Տէրպիլի կողմէն ընդու-
նելութիւն գտած է : Բայց ջրանցին
վրայ յարձակելու հաւանականութիւն
մը չտեսնուի, և Սիւրիայ այն կող-
մէն իւր շահերուն պահպանութեան
վրայ ապահով ըլլալով իւր չեղքու-
թիւնը կը շարունակէ : Բնաւ նշան
մը չտեսնուի որ առ այժմ 'իւրոպա-
կան մեծ տէրութիւններէն մին պա-
տերազմին մասնակցի, թէ և մեծ և
փոքր շատ տէրութիւններ պատրաս-
տութիւններ կընեն : Յունաստանի
նոր նախարարութիւնն, որ ամեն կու-
սակցութեանց գլուխ լինեցէ կաղմուած
է, և հռչակաւոր փանաքիս ծովա-
պետն, որ Ելլուպիոյ յեղափոխութեան
ժամանակ թուրքաց նաւեր հրկիզե-
լով մեծ համար. փաստեալ էր, և
այժմ խոր ծերութեան մէջ կը գըտ-
նուի, նախարարաց գլուխ եղաւ Այս
նոր նախարարութիւնը փոխտուութիւն
մը պիտի ընէ, տուրքերը պիտի աւել-
ցնեն և հեղինակաւ ազգէն զոհողու-
թիւններ պիտի պահանջէ պատերազ-
մական պատրաստութիւններ տես-
նելու համար : Աթէնքի քաղաքը կը
ծանուցանեն թէ Բ. Դանուրի հրաման
գնացած է Օսմանեան դեսպան Յո-
թիւտէս պէյին որ Յունաստանի այն
պատրաստութեանց վրայ բացատրու-
թիւն պահանջէ հեղինակաւ կառա-
վարութենէն :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիլնիւս 18 յունիս .
Բա՛յս լրագիրը Պուրէշէն հեռագիր մը
կը հրատարակէ ծանուցանող թէ Միւսին
իշխանին առ Ռուսաց կայսրն տուած ալ-
ցելութիւնը արդդ քաղաքախաղաղութեան
կամ զինուորական խնդիր մը չէ յուզուած
այն տեսակցութեան մէջ :

Պուրէշ 18 յունիս .
Ստուգուած է որ Ալեքսանդր կայսրը
հիւանդութիւնը քորի հիւանդութիւն է,
և ինքզինք խնամել տալու համար Բեդ-
ըլտարի պիտի գտնուի հաւանականա-
բար :

Ռուսական զօրաց գործ ուղի թիւնն զի-
ծըն հիւսն Ալուիայի և Նիքիլայի մէջ տե-
ղը տարածուած է : Մոսկուս և ծանր
գործողութիւնը կ'ապաստուի :

Փարիզ 18 յունիս .
Երեսփոխանական ժողովն 188 ի դէմ
363 քուէով նախարարութեան դէմ պար-
տաւանաց օրակարգ մ'ընդունեց :

Ձորաց կայ թէ Անգղիոյ նախարարու-
թիւնն ց' միջին լեռնայ վարկ պիտի խնդ-
րէ ապագայ պատահականութեանց առ-
ջն անպատրաստ չգործուելու համար :

Աթէնք 19 յունիս .

Աւստրիոյ դեսպանը մեռաւ :

Երկու վաշտ հետեակ , վաշտ մը հեծ-
եալ և վեց թնդանով զրկուեցան տաշ-
մանագլուխն անկանոն չարժուիներն ար-
դիւնու համար :

Պոլսէն 19 յունիս .

Գաղաքացիներ կը պնդէ իւր հրաժա-
րականին վրայ :

Ձորաց մեծ շարժում կայ Գանուբի ե-
զերքը Նէրկէոյի առջև :

Ռուսաց զօրքերուն մէջ թանջ , տենդ
և աչացառ շատ կայ :

Փարիզ 20 յունիս .

Գերակառն ժողովին մէջ լուծման
յանձնաժողովին տեղեկադիրը կարգա-
ւեցաւ , որոյ եղբայրացութիւնն երեսու-
խանական ժողովոյ լուծումը կառավարիչը :
Առաջարկութեան ստիպողականութիւնն
ընդունուեցաւ , լայն ձախակողմեանց
խնդրանքը վիճարկութիւնը վաղուան
թողուեցաւ :

Պերլին 20 յունիս .

Գոնէսթոնտան Ռուզէնիսկ լրագիրը
կրտէ թէ Ձորին Ռուսներու գտնուելը
Սերբիոյ պատերազմի մասնակցելուն յայտ-
նադէս արգելք եղաւ :

Ռախուզա 19 յունիս .

Գարատաղիք յաղթուեցան Բրէշքի
քով և Օսթրիոյ կրտին մէջ : Օսմանեան
զօրքն երեք կողմէ յաղթարար յառաջ
կը քալէ Գարատաղի մէջ :

Պէրլին 20 յունիս .

Գաղղիոյ նկատմամբ կասկածի դգա-
ցումները վերստին կը ծնին :

Լոնտոն 20 յունիս .

Օսմ. քան.	8 9/16
Փար.	1865 9
"	1869 8 3/4
"	1871 34
"	1872 43
"	1873 8 3/4
Եղիպտ.	40
Անգլ. քան.	94 1/4

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օսմանեան երեսփոխանական ժո-
ղովոյ երկու շարժի առուր նստին մէջ
կառնածական և հաստիւթական (մէ-
մէթիւ) արոց օրէնքները քննուե-
լով, Ագլիանոյ պորոյ, Իզմիրի և Սու-
րիոյ երեսփոխանք առաջարկեցին որ
հաստիւթի կամ վաստակի արոց հա-
մեմատութեամբ տուրք մ'ալ տէրու-
թեան պաշտօնատարաց վրայ գրուի :
Նախագահը գիտադրութիւն ըրաւ թէ
տէրութեան պաշտօնատարաց ամա-
կաններն այն կերպիւ հաշուած են ,
որ այդ տուրքին բաժինն եղած է ,
բայց առաջարկութիւնն ընող երես-
փոխանք նախագահին այս գիտողու-
թեամբը չհամաձայնեցան , և ժողովը
միաձայնութեամբ ընդունեց ամա-
կանց վրայ առաջարկեալ տուրքը :

Երեքշաբթի առուր նստին մէջ ,
որ վերջինը պիտի ըլլար , նախագա-
հըն յայտնեց թէ վեհ. Սուլթանը ժո-
ղովին ներկայ չըլլանք տասն օր ևս
երկարելու հրաման ըրած է :

Ժողովը ներքին փոխառութեան
ճրագիրը , րուէի գներով ընդունեց :
Սոյն փոխառութեան արժեթիւթերն
երեք աստիճանի պիտի բաժնուին ,
50 , 100 և 500նոց թուղթերու :

Լրագրաց գրողի տուրքին բարձ-
ման համար ժողովին կողմէ անցեալ
շաբթու առ Բ. Գուռն գրուած նա-
խակն անպատրաստի մնացած ըլլա-
լով , ժողովը կրկին անգամ գրեւոր
որոշում տուաւ :

Ասկէց զատ ժողովը նկատելով շր-
քի տանեայք այս տարուան զինուո-
րական տուրքը մեծ մասամբ վճա-
րած են , քրիստոնեայնէրը զինուո-
րագրելու տնօրէնութիւնը գալ տար-
ուան թաղու օրոշեց :

Ժողովն օրոշեց նաև որ իւր ջըր-
ուելին ետև մեայուն գիւան մ'ու-

նենայ Ալտհիւրտի Էֆէնտիի տնօր-
նութեան ներքե . արդէս զի ժող-
ովին թուղթերուն պահպանութեան
և ժողովարանի հոգ տանի :

Յար Տի. Պոսթօր լրագիրը կը ծա-
նուցանէ թէ Մի. հէնտիսեան Էֆէն-
տիի խնդրով մի տուրք (յոսու-
եան երեսփոխանական ժողովին) ա-
ռաջարկէր է թղթագրամաց տը-
պագրութիւնն իւր վրայ առնուլ , ա-
ռանց տպագրական ծախքէ զատ ու-
րիշ բան պահանջուո , որով Մալիէն
Պոստեան Էֆէնտիի կապած 7500 զր-
ամանկանն ինչպէս նաև ուրիշ գը-
ծակալաց առած ամսականները կը
շահի :

Ժողովն անցեալ շաբթի օրը
ձեռնհաս պաշտօնատարներ կանչելով
թղթագրամի տպագրութեան համար
հարկ եղած ծախսոց վրայ տեղեկու-
թիւն տուցաւ , և յետ խորհրդա-
ծութեան Մի. հէնտիսեան Էֆէնտիին
կանչելով հրաւիրեց որ իւր խոստմանց
կատարումն երաշխաւորող ստորագ-
րեալ գիր մը տայ : Եւ օրովհետեւ ժո-
ղովը քիչ օրէն լուծուելու վրայ է ,
այս գործը Պետական խորհրդոյ քըն-
նութեան յղել օրոշեց :

Եգիպտոսի խտիվին օրդի Հասան
փաշան երեքշաբթի օրը տէրութեան
նախարարներուն փոխադարձ այցե-
րութիւն տալէ ետև՝ վեհ. Սուլթա-
նին հետ տեսակցեցաւ , և իրիկուն
մօտ ու Անգլիոյ Գեռպանին այցելու-
թիւն տուաւ :

Ն. Բարձրութիւնն երէկ իրիկուն
երեքշաբթի օրը ճաշեց վեհ. Սուլ-
թանին հրաւիրանօք :

Պատրիսթ լրագիրն հետեւեալ տե-
ղեկութիւնը կուտայ Ալաշկերտի զօ-
րաց հրամանատարին վրայ , որ շա-
բաթ առուր կուտին մէջ զարնուեր
մեռեր է :

« Ալաշկերտի զօրաբանակին հը-
րամանատարն՝ հաշակաւոր թաթը-
ճիդատէ Մէհմէտ փաշա քաջարի զօ-
րավարն էր : Երեսը Ռուսք երեք
այլ և այլ կողմերէ Օսմանեան զօրաց
վրայ յարձակուր են , Մէհմէտ փաշա
ժայռի պէս անդրդուելի անոնց բախ-
ման դէմ կեցեր է քաջարար , և կա-
տարել կուտով մ'հինգ վեց հազար
մարդ կտրեր է անոնցմէ . բայց ի
վերջոյ ճակատէն գնտակով զարնուե-
լով գիւղապետար ինկեր է :

« Այս քաջ զօրավարը Գրեմի պա-
տերազմին ժամանակ Կարսի բանա-
կին մէջ հաղարապետ ըլլալով , իւր
մէկ վաշտ զօրքով հինգ վաշտ Ռուս
զօրաց դէմ գրեր և զանոնք ի վա-
խուտ դարձուցեր էր : »

Յունաց վիզլութիւն լրագիրը կը
ծանուցանէ թէ վեհ. Սուլթանն ի-
մանալով որ Ֆէնէրի Յունաց Պատրի-
արքարանին շէնքը խիստ հին է , օ-
րոշեր է իւր անձնական գանձէն նոր
Պատրիարքարան մը շինել , և ասոր
համար ձեռքի մը խնդրուեր է Պատ-
րիարքարանէն :

Եռամսեայ գաղարման գատա-
պարտեալ Սէլամէթ անուն թուրքե-
րէն թերթին արտօնատէր Սարաֆ-
եան Ալիքսան Էֆէնտի և խմբագիր
Սապիթ Էֆէնտի պատերազմական
ատենակին առջև գատուելով աք-
սորման գատապարտեցան :

Միմա անուն գաւազտական թեր-
թը միանգամայն քաղաքական լու-
րեր հրատարակելու արտօնութիւն
ստանալով երկուշաբթի օրէն ի վեր
ամեն օր հրատարակել սկսաւ թուր-
քերէն և Հայերէն լեզուներով :

Տորեկան գինն է 150 զր .
Մէկ թերթին գին 30 փորա .
Բաժանորդագրութեան տեղն է
Բէրա Շիշլի փողոց թիւ 3 Գիւրիշեան
Պողոս աղայի տպարանը , և վէղիր
խան Տիւհեան Մարտիրոս Էֆէնտիի
սենեակը :

Երկուշաբթի իրիկուն Միւսթաֆ-
ֆըզ զօրական մը Սիրքէճի խկէյե-
սիի երկաթուղոյն վրայէն անցած
ժամանակ՝ կառավարմէն կոխուե-
լով կտոր կտոր եղաւ :

Երեքշաբթի առաւօտ իստալացի
մը Բէհասիսանէյէն Բերա դարձած
ժամանակ՝ Ֆէրի-Քէօյի մօտ գին-
ւորի կերպարանքով երեք չարագործ
դէմն երկելով՝ գինքը մերկացուցին :

Ռատիկանութիւնն երկուշաբթի
գիշեր Պալատու թաղը տուն մը կո-
խելով սուտ թղթագրամ շինող դը-
րամանեգներու խումբ մը ձեռք ձը-
գեց :

ԿԱՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍՉՍՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
8 յունիս, չորեքշաբթի իրիկուն	9,21
9 յունիս, հինգշաբթի առաւօտ	
բացուեցաւ	9,23
ծամ 6 1/2ին	9,26
Բուժիչի երկաթուղի	Քր. 24
Թղթագրամ	Վր. 183

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՍՏԱՆԻ ՄԷՋ

Անգղիոյ խորհրդարանին ներկա-
յացեալ կապոյտ անտրակին մէջ՝ Կար-
նոյ Անգլիական հիւպատոս Մ. Ջոհ-
րային 1877 մարտ 21 թուով առ-
կարնոյ կուսակալն գրած բողոքին և
մարտ 31 թուով ալ առ Լորտ Տէր-
պի գրած նամակին պատճենները կը
տեսնուին :

Առաջինը մէջ յիշեալ հիւպատո-
սը գառնապէս կը գանգատի Կարնոյ
կուսակալին թէ Սերասիայէն եկող
170 զինուորք՝ Հէզպէէնք, Կէլիւրէր-
թէք և Կէլլաշուր գիւղերուն մէջ
բռնութիւն և չարք չէ մնացեր որ
չգործեն խեղճ Հայ ժողովուրդեան
դէմ : Ասոնք նախ երկուցի մը կոխե-
լով սրբապղծիլէն յետոյ , քահանայ
մ'ալ կը բռնեն և նախատեղով չա-
րաչար կը խոշտանգեն . այնուհետեւ
կ'օկոխին կանանց և աղջկանց դէմ
նախատական վարմունքներ յղց
տալ , վերջապէս ասոնցմէ 60 հոգի
երեք կին յալիշտակելով չարաչար
կը բռնարարեն , այնպէս որ մինչև
ամենքն ալ գաղանական կիրքեր-
նին յագեցնելով խեղճ կիները կի-
սամեա վիճակի մը մէջ չձգած՝ թող
չեն տար զանոնք , Հիւպատոսն այս
բռնութիւնները պատմելէն ետև
ցաւ կրպայանէ թէ կուսակալն հարկ
եղած կարևորութիւնը չտալով այս
դէպքերուն , հարեանցի կերպիւ
միայն հազարապետ մը քննութեան
զրկել բաւական համարեր է :

Խակ առ Լորտ Տէրպի գրած նա-
մակին մէջ՝ հիւպատոսը քրիստոնեայ
ժողովրդոյ կրած չարքը յիշելէ ե-
տև կըսէ թէ հարստահարութեանց
և բռնութեանց սղին միմիայն հա-
սարակ զինուորաց քով չգտնուիր ,
այլ նոյն խակ սպայից և հրամանատա-
րաց քով ալ գտնուելով չար օրինակ
կրկն զօրաց , և գէշութեանց թիւն
օրէ օր կուելնայ : Չինուարական
սպաները , կըսէ , խանութները կը
մտնեն , ուղաձնին կառնուին , և եր-
բոր ապրանքին տէրերն ընդգիւմու-
թիւն ընեն , փոխարէն թշնամանք ,
հայհոյանք և ծեծ կ'ստանան : Քրիս-
տոնեայնէրն յայտնապէս կը ծեծեն
և անոնց հաւատքը կը նախատեն .
և այս գէշութիւններն հասարակ
զինուորաց առջև գործուելով , ա-
նոնք ալ նոյն դէպքութիւններն բնեւո-

կը քաջաբերին : Այս անկարգութիւն-
ներն հրապարակաւ աչքի առջև կը
գործուին , և տեղական իշխանու-
թիւնք բնաւ կտրուութիւն չեն
տար և արգելելու հոգ չեն տանիր ,
մանաւանդ կտրուութիւն չունե-
ցող տեղեր զօրաց և սպայից կողմէ
համարձակ ի գործ գրուած հարս-
տահարութեանց և եղեռանց մասին
առած տեղեկութիւններն քստմնե-
լի են կըսէ :

Այս տեղեկութիւնները , Բ. Դը-
րան բարեկամ եղող տէրութեան մը
հիւպատոսին գրչէն ելած և Անգ-
լիոյ կառավարութեան հաղորդուած
ըլլալով , կրնայ գիւրաւ մակարեքուել
թէ ինչ աստիճան տխուր տպառ-
ութիւն կրնեն կրօնայի հասարա-
կաց կործնաց վրայ , և ընդհակա-
ռակն սրչափ ուրախութիւն կըտա-
նան տէրութեան թշնամին՝ րուն :

Խակ հայրենասէր Օսմանցի մը չը
կրնար առանց խորին ցաւ զգալու
տեսնել և կարգաւ այսպիսի ողբալի
անցքեր , որոց պատասխանատուու-
թիւնը բովանդակարար այն անհոգ
պաշտօնատարաց վրայ կ'ընայ , որք
իրենց պարտականութիւնը չկատա-
րելով՝ երկրին աւերման պատճառ
կըլլան :

Մեր համագումն այս է թէ՛ մինչև
որ պարտազանց պաշտօնատարք վեր-
ջին աստիճանի խառնութեամբ չպատ-
ժուին իբրև թշնամի պետութեան ,
գաւառաց մէջ բարեկարգութիւն ու
անդորութիւն հաստատուլ անհնա-
րին է :

Ահաւասիկ վանէն մայիս 9 թը-
ւով առ Մանդու մէ ուղղեալ նամակ
մ'ար , որ նոյնպէս այն կողմերը գըտ-
նուող զօրականներէ ոմանց և մանա-
ւանդ Քիւրդ անկանոններու գործած
չարութեանց տխուր նկարագիր մ'է :

Վան 9 մայիս 1877

... Խմբագիր .
Պայազիտ Ռուսերէն զրաւուէլ յե-
տոյ , Օսմանեան բանակատեղին եղած է
Վանէն մի օր հեռի արևելեան հիւսիսա-
կողմի Բերկի գաւառն (Գործոթ , Ապա-
զա , Էն) . ուստի թէ՛ կանոնաւոր և թէ՛
կամաւոր զօրքերն չորս կողմերէն Վան
կը հաւաքուին և աստի կը մեկնին Բերկ-
րի : Մեծ ուրախութիւն պիտի լինէր մեզ
այդ հայրենասէրներուն մեր քաղաք եր-
թեկեկն տեսնել թէ՛ իւրեանց յափըչ-
տակութիւններով և անկարագրելի բար-
բարութիւններով սարսափ չաղէկն ժո-
ղովրդին . . .

Մայիս 5 հինգշաբթի օրը Վանէն չորս
ժամի չափ հեռի Ալիւր գիւղի գնացած
էի մի քանի ընկերներով , մեր Ալիւր հաս-
նելէն մի ժամ յառաջ՝ Կոտուլն եկած
զօրքերն Ալիւրէն մեկնած էին դէպ Բերկ-
րի , մի գիւղեր օթեւանելէ յետոյ : Անկար-
գութիւն , բարբարոսութիւն չէր մնացած
որ չղործադրեն Ալիւր գիւղի մէջ . ամեն
տուներէ բռնի ներս մտեր , այց մար-
դերը ծեծեր , կիներուն սպառնացեր . . .
առեւերուն մէջ ինչ որ գտեր են , կերեր ,
յալիշտակեր , խորտակեր , և չընդգիւմ-
ցողներն խակ գանակոծեր են :

Սարաւանան վարժարանը մտնելով ,
մի խեղճ պաշտօնեայի ստանաման կը յա-
փըշտակեն և զանազան սպառնալիքներ
կանեն , աղայներն սարսափահար կը փախ-
չին զպրոցէն ցիւրեցան , և այդ խեղճ
պաշտօնեայն շատ աղաչելով և նոցա ու-
ղածին չափ հաւկիթ բերելով հաղիւ կըր-
նայ կաղաքուել նոցա սիրտ և իւր ու-
նաման առնուլ : Վարժարանին դաստա-
նալ կըրողքէ այդ զօրքերուն հրամանա-
տալին , բայց և ոչ մի օգնութիւն չըրա-
նելէ զատ՝ իւր փոխարինութիւն ինք ալ
չարաչար կը գաղանկոծուի զօրքերէն , այն-
պէս որ՝ զինք հիւանդ գտանք : Խեղճ
գիւղացիներն դաշտին մէջ վազցունելով
իւր գրաստիք , ետեւէն փայտ կը նետեն ,
այնպէս որ երբ փայտը վաղող գիւղացիին
սոքերուն պիւրելով գետին կընձէ գայն ,
խիղիւր կը վազեն և այն փայտով խեղճ

գիւղացիներն կը ծեծեն զօրքերն իւր գրօ-
ւանքը : Վերջապէս այն աստիճան երկիւղ
ազդած էին իւրեանց բարբարոսութիւնը,
ներով որ երբ մեր Ալիւր գտնուած ժա-
մանակ հեռուէն մի քանի մարդեր տես-
նելով երեկոյին, կարծեցին թէ զօրքեր
կուգան, փողոցներուն մէջ զանուած կի-
ներն սարսափելով վայնառունով և քարերն
անդամ չարժող կոծ ու լացով սկսան ձը-
շել և փախչելով : Եւ այս բարբարոսու-
թիւններն գործողներն կանոնաւոր զօրքեր
են :

Այժմ թէ՛ Վան քաղաք և թէ՛ իւր
շրջակայ գիւղերն աւելի ստիպալի կերպա-
րան աւած են : Այսօր Քուրդ պաշտօն-
գողներուն բարբարոսութիւններն մու-
ցունել կուտան մեզ կանոնաւոր զօրքերուն
արածներն : Մոկս նահանգէն Շէյխի պէկ
քուրդն 500 ի չափ քուրդերով Վան եւ-
կաւ : Շէյխ շէյխապետին ալ 1200 ի
չափ քուրդերով և մեծ հանդէսով քաղաք
մտաւ չարախօս օր (մայիս 7), Գրեթէ
2000 ի մօտ այս քուրդ պաշտօնգողներն
որք դէպի բանակատեղի՝ Քերկըր՝ պիտի
երթան և մի քանի օրէ հետէ կը մնան
այս տեղ, իրենց օրէ պէս ինչն այս քա-
ղաքի վրայ և արդէն կողոպտուած և
մնասուած Վանը թողնողներն չորացունել և
աւերել : Կրօնական յափշտակութիւնը
ներով : Որ գիւղերէն որ անցեր են, Հա-
յերն չարաչար դանակոծեր և սոսկալի
անդիմութիւններն արեր են : Արտամետի
խեղճ Հայ գիւղացիներուն կոնակը բար-
ձած իւրեանց բոլոր ուսանանքներն և ուղ-
մանութիւններն, այնպէս Վան մօտն Շէյխ
ձէյալէտալիի մարդերն : Արտամետի դա-
ստունին Պ. Խոսրովին՝ կռնակն ալ 40-
50 հօսանքի չափ բեռ բարձած էին դրաս-
տի պէս, այնպէս որ խեղճ դասատուն
չնշտապառ հեռալով հայրիւ կրնար քայլել
կեր քաղաք մտան : Ո՞ր օրէն կը ներք
արդեօք խեղճ գիւղացիներն դրաստի պէս
« ուլամ » տանիլ (տարապարճակ վարել) :
Այս տեղէն մի ժամու չափ հետի եղող
Շահապալի գիւղին մէջ իսկ յափշտակեր,
դանակոծեր և քահանայն ալ չարաչար
ծեծեր են :

Անգղ գիւղի էջերն « ուլամի » համար
առնուելով քաղաք բերեր ծախսեր են :
Խեղճ գիւղացիներն եկեր կը բողբէին
կառավարութեան և Քուրդներէն կը պա-
հանջէին իւրեանց գրաստները : Մի Քուրդ
Արտամետի մէջ ասեր է մի արժանաշա-
ւատ Հայու թէ Շէյխ ձէյալէտալի մեզ
արտօնութիւն տուած է մեր կրցածին
չափ կողոպտել և մնասել Հայերուն որք
Ռուսին կրօնակիցներն են, և այնպէս
կարգադրած է որ պատերազմի առնեն
մեք թուրքաց կանոնաւոր զօրքին հետ չը
պիտի խառնուիմք, այլ զատ խումբ պի-
տի կազմուք : Եթէ անհեղինակ որ Ռուսերն
կը յաղթուին, պիտի մանկը նոցա գիւ-
ղերն ու քաղաքներն յափշտակեմք և կու-
ղոպտուով վերադառնամք մեր տեղ : Իսկ
եթէ տեսնեմք որ Ռուսերն յաղթող կը
հանդիսանան, պիտի աճապարեմք փա-
խուստի և կողոպտելով մեր ճանապարհի
վրայ դանուած բոլոր Հայ գիւղերն, պի-
տի վերադառնամք մեր տեղ : Այս խօս-
քերն Քուրդին ասած լինելն կը հաստա-
պեմ, բայց չեմ գիտեր թէ Շէյխ ձէյա-
լէտալի իրաւ այդպէս պատուիրած է :

Պէտք չէ գարնանալ Քուրդ պաշտօն-
գողներուն գիւղերու մէջ արածներուն
վրայ, քանի որ քաղաքի մէջ իսկ խանութ-
ներն կը կողոպտեն, փողոցն անցող Հա-
յերն կը ծեծեն, ստանալներն ու ֆէ-
սերն կը յափշտակեն : Անցած օր սուր
ծախսով մի Հայու քով կերթայ մի Քուրդ
և թուրս սրէ ասելով չարաչար կը ծեծէ
և դուռն կը պատուէ : Խեղճ Հայն կա-
ռավարութեան բողբէք, բայց չեմք գի-
տեր թէ ինչ արդիւնք ունեցաւ :

Այսօր չուկային բոլոր խանութներն
գոցուեցան, ոչ ոք կը համարձակի իւր
խանութն բանալ : Բարեկամներու ստիպ-
մանց հակառակ այսօր Այգեստանէն
քաղաք իրաւ փոստան նամակ ձգել : Մի
խեղճ Հայ երիտասարդ ելաւ դէմ գոր
« պաշտ պօղոց » քուրդերն փողոցին մէջ
ծեծեր էին զաւագանդներով իւր դուռը
հօտիւն : Յորդորեցի պիճը որ երթայ կա-
ռավարութեան բողբէք, այդչափ քա-
ջութիւն անգամ չէր մնացած իւր վրայ...
յուսահատութիւնէն : Այս նամակ մի

բարեկամ դասատուի վարժարանն ճը-
տած կը գրէին : Երանարձ մի սղմուկ և
լաւ, պատուհանն երայ և տեսայ որ քուրդ
կամաւորներն երկու Հայ տղաներու ֆէ-
սերն յափշտակած էին : Տղաներուն գո-
ռում գոչումէն մի քանի մարդեր հասան,
ոստիկան բերուեցաւ և կառավարութեան
դուռն տարուեցաւ յափշտակիչ քուր-
դըն՝ որ անվեհեր և ծիծաղալի՞մ կը քա-
լէր : Այս նամակը գրած ատենա թէ՛ տե-
սածներէս և լսածներէս սիրտս այնպէս
սաստիկ յուզուած է որ, ներքեք, է-
ֆէնայի, եթէ ասեմ որ Հայ ծիղիւն իրաւ
դժբաղդութիւն է եղեր : Խեղճ ազգ, որ
ոչ ոք կը պաշտպանէ և որ ամենէն ալ
ոտնակոծ եղած է : Միթէ կարելի՞ է որ
յուսահատութիւն, ազգային զգացում,
բարոյական վսեմ գաղափարներ ունենայ
մի ժողովուրդ որ այս աստիճան թշուառ
և հարստահարուած վիճակի մէջ կը գլա-
նուի :

Մեք կը կարծեմք թէ մնասն զատ ու
զուտ չունին բնաւ կառավարութեան
համար այդ քուրդ պաշտ պօղոցներն, վր-
ինչ կարող են անել մի քանի հազար այս-
պիսի մարդիկ, որք արդէն կանոնաւորա-
պէս մարտ մղել չեն գիտեր, այլ իւր-
եանց ամբողջ կենցաղն հուզկաւարու-
թեամբ անցուցած լինելով, բնականապէս
իւրեանց գործ պիտի լինի աւարել և ա-
ւերել :

Մայիս 5 ժամ առաւօտեան 2 ին ա-
տեններ Այգեստան Սահակ պէյի շքեղ
սպարանը բռնկեցաւ : Թէ այս հրդեհ
ինչ կերպով եղած է, այդ մասին զա-
նազան զրոյցներ կը պարտին : Բայց մեք
խոհեմութիւն կը համարեմք չլիւնել այս
տեղ : Պէտք է գիտնալ որ այս տեղ Ս.
Պօստը պէս հրդեհներ չեն պատահիր եւ
դա՛մ մնան 60000 զորուի չափ կը կար-
ծուի :

Կը խնդրեմ, . . . խմբագիր տէր, որ
ներկայ հրատարակելով, կառավարու-
թեան ուղադրութիւնն հրախօսէք քուրդ-
կամաւորաց ձեռքէն մեր ունեցած թը-
ւառ վիճակին վրայ :

Միւր Զերդ

...

Յ. Գ. Հոգեւոց վանուց տիրացունքէն
մին վաթսուս տնայ մի ալեօր ծերունի
Պիթ — Պաղարի հրապարակի մէջ քուրդե-
րն կը բռնեն այժմ և դու Ռուսական
լրտես կը նմանիս ասելով, զաղպներով
կը հարուածեն և մահաւանդ կը վիրա-
ւորեն, թէ և չոյն իսկ ներկայ դատող
թուրքերն կը վկայեն թէ ծանօթ մարդ
է այլ և լրտես չէ : Խեղճ արեւմտա-
թափ առին տարին Շէյխին քով : Եւ
կայն պարտող Հայերն սարսափաւոր կը
վազեն և կը փախչին այս գրած վայր-
կենիս :

Նոյն

Ահա տակի կտրուց երկուսիսան
խորաճան Մեծ. Գանիէլ էֆէնտիին
անցնալ հինգչար թի օրն Օսմ. երես-
միսխանական ժողովոյ մէջ բրած ար-
դարարական առաջարկութեան
պատճենը :

Էֆէնտիէր .

Մէկտալի հարալից օրան կը դուռ
վրայէթի հազարըստ պաղը կէօնէ ինչա-
տէր պէտան ինչ նազարի տիգղաթի ա-
լիւթիկի տալթ իլլմէկէ մէկտալ օլ-
մուլմ չէօյլէ քի զայլէյի հազարէնին
զուհուրըստ իյոնիլ տէկին տիկէր վի-
լայէթիլրտէն իյոնիլ նազարիլ վէ հայկան
վէ չօրտալ վէ միլիման վէ սայիլէ հէր նէ
քի վերիլլէ իսէ՛ մէկքիւր կը դուռ վի-
լայէթի ումում աշալիս թարափընտան
տալիս պիտուիլ քիլիտալիլ իլլ վերիլ-
տիլտէն մաստ պիլ սէնէտէն պէրու օլ
հէվալէկէ կէօրիլլէ թէ տարիլլէտիլ հար-
պիլլէ էստարըստ թօփ վէ ճէպիսանէ վէ
սայիլ միւհիւմիլլէ հարալից նազիլ ի-
չիւն տալի օն պիլ արապալարը միւթէ-
մատիլլէ իսթիլիտամ օլունմաղտա տըր-
պէտանէ հաճէթ օլունմաղը իւզլէ օնպիլ
աշապալան իլիլիլ պիլ իլլ մանտա վէ
էօրիլլ վէ օն պիլ ատամ իլլ իլլ յէպիլլէ
ճէկի մալիլ տըր :

Վէ պունտանտա մատա հիւմէ աշա-
լիլին եալընդ պիլ գաշ մաշըլլ մէքիւ-
լաթի պրապըրալ գուստ օլ մէքիլտէրի

օլան պուղտալ վէ շայիլ վէ հուպուպաթը
սայիլէ հէր նէ քի պուղտալ իսէ կէլլէն-
լէրտէ ճանիպի հիւքիլլէթի սէնիլէտէն
քեաֆիլլէպի պընուպ պատէհու վէրիլլէ-
րիլլէ մահաւալ օլունմաղ վէ կափստ տը-
ճէպի վէրիլլէ իւզլէ սէնէա վէրիլլէ,
վէ կէլլէն մէկտիլլի չիթատէ տալի ատա-
քիլի շահանէի թաղուր թաղուր գարի-
յէլլէրտէ պէյիլլէթիլլէ կալէք քեալիլ-
ֆիլլի մէքիլլէրիլլէն իսէլ աշալիլ թա-
լուիլլէտան պա սէնէա թէպիլլէ օլուն-
մալ տըր վէ պու կիւնիլլէրտէ տալի աշա-
լիլի մէքիլլէտէն օլունմալի հիւմալիլ ի-
չիւն ելլէ քիլլիլլէթիլլէ հայկանաթ թօփ-
լալըլլէտալ տըր :

Վէ էֆէլլ պահար աշըրալ դըրաթի
իթմէք մէկտիլլի կէլլի կէլլէլլ տիւլմէն
հէր թարափտան հուստուի խաղանկի
թէճալլէլլէ պիլ շըք մահալլէլլէրիլլէ ա-
լալիլլէնիլլէ փայիլմալ վէ աշալիլի գրաթի-
տէն մահալլէլլէ գըլըլլէ միսիլլէ գալըլ-
լըլլէ օլունմալ թէպիլլիլլէ հալլէ պուլլէ
մաք իւզլէ հէր տանմալ վէ գաղալլէրտէ
քէպիլլէթի սաղաթիլ շահանէ տալի պու-
լունմաղընտան հէր քէս լալիլլէ իլլ գը-
րաթի վէ սայիլ ումումըրընտա պաղա-
մալուպ զարուրէթիլլէ հալլէ պուլլէտալ-
լըլլէ աշիլլէպիլլէ քէպիլլէթ օլունմալ-
տան պու պապիլլէ թալիլլէ հաճէթ կէօ-
րէմէլլէ :

Պիւնպէրիլլէ կը դուռ վրայէթիլլէն իս-
թէնիլլէլլէ իսթիլլէրապաթը մէկտալիլլէն
միւթիլլէտա թալլէլլէլլէլլէ էֆէր ճիլլէթ-
էլլէլլէ տիլ, գիլա սնէլլէ իսթիլլէրալ սու-
րէթիլլէ իլլ պու գաղալլէ լէլլէ վէրիլլէլլէ,
վէ պիլ ալ ումում թէպալլէլլէ հաղրէթիլլէ
շահանէլլէ թէպիլլէթ օլունմալ իլլալ
նաճալ իսթիլլէրալ մուգալիլլէտէն հու-
պուպաթ տալիլլէ ալլունմալ թէպիլլէ
մաղալ օլունմալ իսթիլլէրալ թալիլլէլլէլլէ
միւթիլլէթիլլէ իսթիլլէլլէլլէ, իլլէլլէ կը դուռ
վրայէթիլլէ աշալիլլէ վրէլլէլլէլլէ իսթիլլէ-
րալլէ պիլ գաշ միսիլլէ հուպուպաթ վէ
աղիլլէ վէ պէլլէլլէ արապալ վէ սայի-
րէ վէրիլլէ արիլլէ :

Վէ մատամ քի վրայէթիլլէ պիլ գըլմ
մահալլէրի տիւլլէն սաղաթիլ իլլ միւթ-
ալլէ վէ տիլլէլլէ գըլմընտա տալի սաղաթի-
քիլլէ շահանէլլէն պու գաղալլէլլէլլէ
կի վար վէ չիթիլլէլլէ մէքիլլէթիլլէ պալի
միլլէլլէ պէ միւգալիլլէլլէ շէլլէլլէ օլունմա-
լըլլէլլէ իսթիլլէթիլլէ, պու հալլէլլէ պէլլէլլէ
պիլ աշալիլլէն իսթիլլէրալ ալլունմալ
իլլիլլէլլէլլէ հալլէլլէ օլունմալ վէ շայիլ իս-
թիլլէլլէլլէ իսէ մէկտիլլէլլէ օլունմալ պէլլ-
րան իմալլէլլէ տէլլէլլէ օլունմալ
րէթիլլէլլէլլէ նալլ պիլ լէլլ վրայէլլէ
զուսթիլլէլլէլլէ օլունմալի տալիլլէ էստա
մուլլէլլէլլէ իսթիլլէլլէ պիլ քէպիլլէթ
օլունմալի միսիլլէ, Վան վրայէթիլլէ իլլ տի-
կէր մէկտալլէլլէ հարալից օլունմալիլլէլլէ-
րին տալի պիլլէլլէ շէլլէլլէ գաղալլէ պու
գաղալլէլլէ օլունմալըլլէ թալիլլէ իսթիլլէ
ճիլլէլլէ պիլալլէլլէ պէլլէլլէ շայիլ
իսթիլլէլլէ սաղալլէլլէ մէկտալիլլէ հարալլէ
վրայէթիլլէլլէ իլլ օլունմալ թալիլլէլլէ
լէլլէլլէ տալիլլէ պիլ գաղալլէ վրէլլէլլէլլէ
շէլլէլլէ քիլլէլլէ հաղալլէլլէ միւթիլլէլլէ
միւթիլլէլլէլլէլլէ հէլլէլլէ էլլէլլէլլէ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՊՐԻՄ—ՄԵՆՆԻՄ

Ապրիլ թէ մեռնիմ, տալլ մը կերպէր,
եւ գալլի վրայ ալիս կը հերիէր :
Դեմքով էր արտում, մեռնիլ կըսէր ա՛հ,
Մեռնիմ և երթում, եկուր դիս ա՛ն մահ :
Հայրիկը մեռաւ և ալ չունիմ մայր,
Անկողին ինկած կը հիւծի եղբայր,
Եւ ես գերի եմ ու սրտով անլոյս,
Թէպէտ հասակով ըլլամ նորարոյս :
Ապրիլ, է՛հ ինչո՞ւ, այս երկրի վերայ
Ազատ ծնելով, ապրիլ եմ ծառայ :
Ծառայի մը համար չկայ բնաւ կենք,
Անլուր վշտերու է այն միլին հանք :
Մեռնիմ, ո՛ր տերև, դուն արդ սրտէ,
Կասկած վէրքի չափ սրտեր կը յօշ . . .
Եւ թշուառ որքը մատերով զգըր
Կը փետուր մեզիմ Ժողիկը քնքուր :
Ապրիլ թէ մեռնիմ, վարչին թերթն ապրէ՛
Կըսէր հէք սրբին, ապրէ՛, ուշաբթի՛,
Զի անյուսութիւն մեր առջի քայլէ,
Այս երկրի վերայ, վատին կը վայլէ :

Գերութեան չղիւյ շէրթիլլէ լալլէ,
Սրտի առնութիւն պէտք է և կորով :
Ապրէ՛, կուտեմ օր պիտի ծագի,
Օր ազատութեան, օր յաղթանակի :
Ապրէ՛, այս աշխարհ կուտի է մեծ գաղտ,
Ինքնամեռ երբեք թշուառ անհաշտ
Աշխարհէս չեկներ : Կ'սպասէ կամպուս
Զինուորի նման արի և անբռն :

ՆՈՒՄԵՐՈՒՄ

Տալլ թոր Ս. Յակոբեան էֆէնտի
վրայեալ թիլլէլլէ իւր բնակութիւնը
Գաղալլէլլէ շայիլ էկեղեցւոյն ետեւի
փողոցը թիւ 2 առա՛ր փոխադրած ըլ-
լայով, կը փութայ ծանուցանել թէ
իւր ինտանց պէտք օլունմալիլլէլլէ կըլ-
նան պիլլէլլէ գալլէլլէ իւր բնակարանն :
ուր երիւքալլէլլէ և ուշալլէ օրերն
ալ առաւ օտէն միլլէլլէ ժամ 3 պատ-
րաստ է առ ինքն զիմալ հիւանդ նե-
լը ձրիապէս գարմանելու :

Ի Լ Ա Ն

Ասաքիլի Շահանէ Էլլիլլէ ան-
պարնա թօսեա մամուլալլէլլէլլէ օ-
լարալլէ մուպայիս օլունմալ 100000
ատէտ քըրմըլլէ եունդ ուշալլէլլէ թա-
լիլլէլլէ օմմթալլէլլէլլէլլէլլէլլէ պէ-
հէր մահ 20000 ատէտի թէպիլլէ օլուն-
նարալլէ պէլլէ մահ Նիհալէթիլլէլլէ ար-
գալլէլլէ ալլէլլէլլէ վէ պահալլէ թէպիլլէլլէ
նի միւպէլլէլլէ վերիլլէլլէլլէ օլունմալ
պուլլէլլէ սէնէալլէ վրուսթիլլէլլէ պէլլէ
հի փէլլէլլէ երալլէլլէ քալլէլլէ 100 զըլա
օլունմալ Նիգամիլլէ խաղիլլէլլէլլէլլէ վէ-
րիլլէլլէ շարթըլլէլլէ պէլլէլլէ ատէտի 10
զըլալլէ օլունմալ թալիլլէլլէ Էօհթիլլէլլէլլէ
օլունմալ հաղիլլէլլէլլէ լումիլլէլլէ օն իւլլէլլէ
ճի փաղար էրթէլլէ կիւնիւ գաղալլէ
գալլէլլէ վերիլլէլլէլլէլլէլլէ, իմա իմ-
մէլլէ թալիլլէ օլունմալլէլլէ ելլէլլէ մէկ-
քիլլէլլէ Տարի Շուրալլէլլէլլէլլէ կէլլէլլէլլէ :

8 հազարան 1877

4

Պապը Սէրասքէրի

Ասաքիլի Շահանէ Էլլիլլէ անպա-
լընա 5000 գըլլէլլէ հէման վէ գու-
սուրը 31 կիւնէ գաղալլէ ճէպիլլէ ճէս-
թէ թէպիլլէ գըլլէլլէ վէ պահալլէ
մաղալլէլլէ սէնէալլէլլէ վրուսթիլլէլլէ պէլլէ
վէլլէլլէ փէլլէլլէ սիմ մէճիլլէլլէ 20 զըլա
վէ մէճիլլէլլէ վերիլլէլլէլլէ փիլլէլլէ
ֆիլլէլլէլլէլլէ պիլլէ հիւսալլէ ֆարգըլլէլլէ
պէրապէր գալլէլլէ օլունմալ Նիգամիլլէլլէ
խաղիլլէլլէլլէլլէ վէլլէլլէլլէ շարթըլլէլլէ
Տարը Շուրալլէ մահալլէլլէ պուլլէլլէ
նումուլլէլլէ վէլլէլլէ մուպայիս օլուն-
նալլէ 20000 գըլլէ կիլլէլլէ հանա
սաղալլէլլէլլէ պէլլէլլէ գըլլէլլէ 4 զըլալլէ
օլունմալ թալիլլէլլէ Էօհթիլլէլլէլլէ օլունմալ
հաղիլլէլլէլլէ լումիլլէլլէ օն իւլլէլլէ
գալլէ էրթէլլէ կիւնիւ գաղալլէ գա-
լիլլէ վերիլլէլլէլլէլլէլլէ, իմա իմ մէլլէ
թալիլլէ օլունմալլէ ելլէլլէ մէկքիլլէլլէ
Տարի Շուրալլէլլէլլէ կէլլէլլէլլէ :
6 հազարան 1877

4

Պապը Սէրասքէրի

Ասաքիլի Շահանէ լաղըմէսի իլլին
թօփը վէ սիլլալի հալլէլլէլլէլլէլլէ
լուգում կէօրիլլէլլէլլէլլէլլէ կէն վէ
թիլլէլլէլլէ ետեւի պէլլէ եալլէլլէլլէ ել-
տի վէ սոգալլէ եալլէլլէ գաղալլէ հէր
քիլլէլլէ ելլէլլէլլէլլէ պու միսիլլէ թօփ-
ը վէ սիլլալիլլէ էլլէլլէլլէլլէ հալլէլլէ
վար իսէ՛ պիլալլէ փօթիլլէ թօղրուտան
թօղրուլլէ Պապը վալլէլլէ հաղիլլէլլէ
Սէրասքէրիլլէ քեալլէլլէ Նիգամիլլէ թահ-
սիլլէլլէ գոմիլլէլլէլլէլլէ ճիւմա էրթէլլէ
վէ փաղար էրթէլլէ վէ չհարչէլլէլլէ
կիւնիլլէլլէլլէ կէօլլէլլէլլէլլէլլէ վաղար-
լըլլէ գալլէ օլունմալլէ անտէ ազլէսի
փէլլէլլէ վերիլլէլլէլլէլլէ իլլան օլունմալ :

1 հազարան 1877

Պապը Սէրասքէրի

Եղեկոթեանց համար պէտք է զրաւ յիշ-
աթիոյ Բէրչէմպէ ռազարի մօտ Ելավանի
լիւղոր գործտկատար